

ՄԻ ՔԱՆԻ ԿԻՍԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԷՐԻԿ ՀԵՄՓ (Զիկագո)

1. *g'-նայ հնչյունախումբը հայերենում

«Դասական հայերենի ուսումնասիրության ներածություն» աշխատության մեջ Ռ. Գոդելը¹ դասակարգում է հայերենի բաղաձայնական կուտակումները և հետևելով նախահայերենի ձայնեղ հպական+հ հնչյունախմբերի զարգացմանը, օրինակներ է բերում *dr, *bhr, *g'hr և *ghr կապակցությունների համար և նշում, որ նման կապակցություններ 1 ձայնորդով հայերենում բացակայում են: Ա. Մեյեն² խոսում է art-oy (արտ) բառի հանելուկային է-ի մասին, մինչդեռ Զոտան³ առանց տատանվելու կապում է այս բառը սանսկ. ajrah, հուն. ἄγρος, լատ. ager, գոթ. akrs բառերի հետ: Այս բառի *g'-ի կիսաշփական արտացոլումը *r-ից առաջ հավանորեն ենթարկվել է փոփոխության՝ կորցնելով իր շփականությունը նախքան *Cr-ի դրափոխությունը, այսինքն՝ նախքան *Cr>rC վերածվելը: Ուստի հնչյունաբանորեն ավելի հավանական է, որ 1-ն, լինելով լեզվածայրային հնչյուն, ներառել է հենց լեզվածայրային s շփական հնչյունը: Նույն եղանակով կիսաշփականի ծայրալեզվային ելքը սխալմամբ դիտվել է որպես r- հնչյունի մաս: Պետք է ենթադրել, որ այս փոփոխությունը ընթացել է հետևյալ կերպ. *g'r>*dz'r (կամ *ts'r)>*dr (կամ *tr)>*rd (կամ rt)>rt.

tal (տալ) բառի ցեղակցությունը հուն. γάλαξ, լատ. glōs, glōris, սերբո-խորվաթերեն zaōva բառերի հետ կասկած չի հարուցում, չնայած որ *cal ձևի բացակայությունը հայերենում վերագրվում է taygr բառի ազդեցությանը: Սակայն հարկ չկա դիմելու այս անկանոն միջամատության վարկածին: Եթե ելնենք նախահայերեն *g'loH(u)-/g'!Hu->*g'lo(u)-/g'!Hu- ձևից և ընդունենք, որ *g'-ի հետագա զարգացումը տեղի է ունեցել *g'r-ի համարանությունում, ապա վաղ հայերենի հարացույցը պետք է արտացոլեր *dlo- (կամ *dlu-) և *dzal(a)(w)- ձևերը: Եթե դատենք lezu (լեզու) բառից, որը վերջին հաշվով պետք է ծագած լինի *dlnɡ'huH_a>*dlnju->*lVzu ձևից, ապա պետք է սպասեինք *dlō- հնչյունախմբի վերածումը *lu-/-ի: Սակայն հարացույցը ըստ երևույթին սկզբից հավասարեցրել է *dlō-/dal(a)->*lu-/tal(a)-/-ին: Մյուս կողմից, հայերեն calr (ծաղր) (:չելաօ) բառաձևը պահպանվել է հաջորդ ձայնավորի հերթագայության շնորհիվ:

¹ R. Godel. An Introduction to the Study of the Classical Armenian. Wiesbaden, 1975, 79 § 4.342.

² A. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, 1936, 101.

³ D. R. Solta. Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen. Wien, 1960, 132.

⁴ A. Meillet. Esquisse..., 144.

2. *t*-ի արտացոլումը *c*-ով

Վերը ասածի հիման վրա այժմ հնարավոր է հասկանալ հայերենի մյուս երկու բառերը: Հուն. *όνειδος* սովորաբար համեմատում⁵ են սանսկ. *nidana-*, լիտվ. *niedėti*, գոթ. *ga-naitjan* և հայերեն *anicanem*, *anēc* (անի-ծանեմ, անեծ) բառերի հետ: Ենթադրվում է, որ վերջինիս՝ անցյալ կատարյալի, հղակի 3-րդ դեմքի ձևը ծագել է **-d-s-et* ձևից. եթե այդ այբպես է, ապա հայերենը կամ պահպանել է հնդեվրոպական բաղաձայնական կուտակումը՝ ա-տամնային պայթական + *s* մինչև շատ ուշ ժամանակներ և կամ ձեռք է բերել նման կապակցություն ձևակերպության սահմանում, որն ավելի հավանական է: Սրա հետևանքը եղավ այն, որ բոլոր դեպքերում հնարավոր էր նորովի մեկնաբանել **aneidnne*-(*<*H_oneid-nē/o-*) որպես **aneidzune*->**anēcān-*, եթե ընդունենք, որ *n-*ն՝ *r-*ի և *l-*ի նման կարող էր դիտվել որպես **d-*ի և **dz-*ի չեղարացման միջավայր:

Այժմ անդրադառնանք հայերենի *anic* (անիծ) բառին, որը պետք է համեմատվի հուն. *ἄνις* *ἄνις*-, ալբ. (տոսկ.) *thērī*, հին ադղ. *hnitu*, սերբո-խորվ. *gnjida* բառերի հետ⁶:

Հին իռլ. *sned* և ուելս. *nedd* բառերը պետք է բացատրվեն առանձին. դրանք ըստ երևույթին արտացոլում են կելտերենի ինքնուրույն զարգացումը, որտեղ **s-*ն հանդես է գալիս որոշ հնչյունախմբերի փոխարեն. այստեղից և **sknid-* ձևը, ճիշտ այնպես, ինչպես **sd(l)ng̊huāt*-> ուելս. *tafod* «լեզու» բառում⁷, լատ. *lingua* < **dl̥ng̊hua*: Պետք է ելնել ձայնդարձի բաղաձայնահանգ հառացույցից, որտեղ հունարենը և ալբաներենը արտացոլում են ձայնդարձի լրիվ աստիճանը՝ **k'onid-* (տոսկ. **thēnī*-> *thērī* միջձայնավորային ռոտացիզմով) ուժեղ ձևերում, իսկ գերմանական և սլավոնական լեզուները արտացոլում են ձայնդարձի զրո աստիճանը՝ **k'nid-* (թույլ հոլովներում): Հայերենում մենք պետք է ընդունենք հետևյալ զարգացումը՝ **k'onid-/k'nid-* > **k'onid-/k'nnid-*, բրտեղ պահպանվել է հարացույցի նույնական կառուցվածքը: Սակայն բառակազմի *n-*ից առաջ գտնվող **k'-*ի անկման հետևանքով, ճիշտ այնպես, ինչպես *k-*ն ընկնում է *l-*ից առաջ **k'lu-* > *lu* կապակցություններում, հարացույցային կապը **k'onid-/nid-* ձևերի միջև խախտվել է, **nid-* > **anid-* ձևերը սկսել են զարգանալ ինքնուրույն և բառը սկսել է թերևս սխալ մեկնաբանվել որպես նախածանցից անջատված պարզ բառարմատ: Այնուհետև **anid-* հիմքը սկսել է խառնվել *aneid* > **aneidz* բայի հետ, որին երևի նպաստում էր նաև հայցական հոլովի **anid-n* ձևի նմանությունը: Այդ եղանակով ստացվել է *anic* ձևը:

3. *c*'-ն իբրև հնչյունախումբ

k'aic'r (ֆաղթ) բառը երկար ժամանակ մնում էր առեղծվածային: Նաև. Հայերեն *k'aic'r*, հզ. *k'aic'un-k'* բառի վերաբերյալ Հյուբշմանը⁸ նշում է ավեստերեն *xvarəz-ista-* «ամենահամեղ», պրսկ. *xvalīdan* «համեստ անել բառերը, բայց համարում է այդ համեմատությունը կասկածելի թե՛ իմաստաբանական և թե՛ հնչյունական առումներով:

⁵ P. Chantraine. Dictionnaire etymologique de la langue grecque. Paris, 1968—1977, 802.

⁶ J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch, 608.

⁷ Etudes celtiques, 14, 1975, 461 և հաջորդ էջերը:

⁸ H. Hübshmann. Armenische Grammatik. 1—2, Leipzig, 1895—1897, 502.

*xværezu- բառի ճիշտ համարժեքը պետք է ունենար *k'aǰr- կամ *k'aǰr աները: Նա նույն-պես բացատրում է այդ բառի կապը k'aǰc' (սովածություն) բառի հետ իմաստաբանական սլատառաբանումով: Սակայն, եթե մենք կարողանանք լուծել k'aǰc' բառի հարցը, կապելով այն սանսկ. svādu- 'քաղցր, համեղ' և svada 'համ, որևէ համ' բառերի հետ, որոնց հետ այն անկասկած հարաբերակցվում է, ապա հիմք չկա անջատելու k'aǰc' 'սովածություն' (<'ա-խորժակ') բառը k'aǰc'-ից. ի դեպ ասենք, որ Հյուրըմանը բերում է Բարթոլոմեի կարծիքը այն մասին, որ հայերենի *k'h-ն արտացոլում է իրանական *g'h կապակցությունը:

Մենք⁹ ոչինչ չի ավելացնում վերն ասածին, բացի նրանից, որ դասում է այն u- հիմքով բառերի թվին: մի կարևոր սխալ, որով վերոհիշյալ բառը տեղադրվում է հնդեվրոպական հակախիշ ածականների շարքը (հուն. γλυκύς, γλυκύς, լիտ. saldus, սլավ. sladъ, սերբո-խորվ. slādak և կողմնակիորեն լատ. suavis, dulcis, թոխ. A swār B swāre):

Այժմ պետք նաև, որ u- հիմքով բառերը նախապես կապված են եղել s- հիմքով բառերի հետ, ինչպես երևում է հուն. πᾶσι-γλυκῆς և սանսկ. prā-svādas- օրինակներից: Հնդեվրոպական իսկական բարդություններում բացառված էին u- հիմքով բառերը որպես իսկական բազալությունների վերջին տարրը¹⁰: Այդ իսկ պատճառով առավել ևս պետք է հաշվի առնել *suād-(e)s- բառի օրինակը: Փաստորեն, այդպիսի մի գոյական կարող էր վերջին հաշվով ընկած լինել k'aǰc' բառի հիմքում: Այս s- հիմքով, ինչպես նաև համեմատական աստիճանով 'սանսկ. svādiyas-, հուն. γλυκύς'¹¹ կարելի է բացատրել նաև svādū- և նման բառերի արմատային լրիվ ձայնդարձը: Եթե նախնական գրո աստիճան ձայնդարձով *suH₂dū- ձևը պահպանվել, ապա կարելի էր տեսնել վանկային արտացոլումներ, որի օրինակը մասնակիորեն պահպանվել է լիտ. sūdyti 'համեմել, թթու դնել' բառում, որը թերևս չի վերաբերում սանսկ. sūras և անգլ. sour, և այլն բառերին, ինչպես կարծում է Ֆրենկելը (սլավ. сыр 'խաչ' պետք է ունենար մեկ այլ նախածին, որը երևում է թոխ. su, swā-s 'անձրև' բառից): Այսպիսով՝ բառի վանկային տեսքը վերափոխվեց և սլավոնացի ընդհանրացնելով լրիվ ձայնդարձը *sueH₂d- -ն, որը վերաբերում է նախնական *sueH₂d-es- ձևին:

Եթե մենք ունենայինք *sueH₂du- = *suādū- ձևի անմիջական շարունակությունը, ապա պետք է սպասվեին *k'alr կամ *k'ak ձևերը, հմտ. meǰk < *meǰdu: Այժմայն k < *du արտացոլումը պարզորեն ցույց է տալիս, որ բառամիջի -d-ն մի ինչ-որ ժամանակ սահսկանվել է: Այդ պատճառով էլ հնարավոր է ենթադրել, որ ճիշտ այնպես, ինչպես *ks տվել է c' և *t's (ինչպես մենք կ'ուսենք ստորև) ավելի վաղ ձևը՝ *suād-(e)s- > *k'al-s- կարող էր նպաստել վերոհիշյալ c' արդյունքը ստանալուն: Այսպես՝ s- հիմքից ստացված արդյունքը և այն դարձացումը, որի մասին կիսովի ստորև, կարող էին միաձուլվել, բայց միայն այս առումով:

Մնում է, սակայն, ևս մի չլուծված հարց՝ գտնել չ-ի ծագման հավանական աղբյուրը:

Աճառյալը գտնում էր, որ բառասկզբի k'-ի մեջ պահպանվել է հնդեվրոպական *suādū- բառի սկիզբը և փորձում էր կապել այն հուն. γλυκύς բառի նախածին հետ: Չնայած նրա այս փորձը հաջողություն չունեցավ, քանի որ այն ենթադրում էր չպատճառաբանված վերջածանցի դոյությունը, սակայն նրա այդ մոտեցումը խորհելու տեղիք է տալիս: Հետագա շարադրանքում մենք փորձում ենք կառուցել մեր ստուգաբանությունը՝ հենվելով Աճառյալի այդ մտահղացման վրա, ինչպես միշտ հերքելով այն միտքը, որ հայերենը անսովոր դարձացման և անկանոնությունների արդյունք է. հայերենը նույնքան համակարգված ու կանոնավոր լեզու է, որքան յուրաքանչյուր այլ լեզու:

⁹ A. Meillet. Esquisse..., 76.

¹⁰ J. Wackernagel. Altindische Grammatik. II, 2 Göttingen, 1905, 466, § 286e.

¹¹ Նույն տեղում, 449 § 273b:

Սկսենք իմաստային կրկնություններով առաջացած սաստիկական բարդություններից. *suād-(u-)dluk'-u- . Բաղադրության երկրորդ տարրի մասին տե՛ս մեր վերլուծությունը¹²: Սրանից ստանում ենք *swadluk'u->*k'altusu- ձևը, որի ոչ բոլոր տարրերն են թերևս արտացոլված ժամանակակից լեզվում: Ընդունում ենք նաև բառամիջի -u--ի անկումը, միգուցե առաջընթաց հապտոլոգիայի պատճառով: S-ից առաջ t-ն շնչեղանում է, ճիշտ այնպես, ինչպես k'-ն k'san բառում. այսպես մենք ստանում ենք *k'ai't'su- ձևը: *t's հընչ-յունախումբը այժմ գիտակցվում է որպես c' և մենք կանոնավոր ստանում ենք k'ai'c'r.

Այժմ, երբ մենք տեսանք, թե ինչպես է *t's-ն վերածվում c' -ի, կարելի է հուսալ, որ կբացատրվի նաև ert'am բառը: Անշուշտ, այս բառը ցեղակից է հուն. ἔρταμοι 'գալ', արբ. ardh- (անցյալ դերբայ) 'եկած' <*ordg'(h)-: Հին իռլ. *erge 'զնա', ապառնի ձևը՝ rega- <*rigā- <*rīg'(h)-a- ձևերին: Համաձայն հայերենում հայտնի կանոնների, *rd հնչյունախումբը տալիս է rt (sirt), *rt և *rdh հնչյունախմբերը տալիս են rd (ard 'այժմ' միգուցե նաև ordi <*ordhio-), *dr- պետք է տար. -rt- (artawsr և բառամիջում k'rtunk'), *tr- պետք է տար. -r- (erek' և բառամիջում, եզ. սեռ. hawr), իսկ *dhr- պետք է տար. -rd- (erddum, և կողմնակիորեն durgn).

Այսպիսով, ոչ մի հնչյունախումբ անմիջականորեն չէր կարող տալ ert'am ձևը, և փաստորեն *erg'h- ձևից պետք է սպասվեր *erj- ձևը: Նշենք նաև, որ հունարեն և հին իռլանդերեն համարժեքներից մենք պետք է ստանալինք ներկայի տարահիմք *erg'h- նախաձևը, ճիշտ այնպես, ինչպիսին դրանում ենք ert'am բառում. այդ իսկ պատճառով ենթադրում ենք անխակական ըղձական ձև (հմմտ. հին իռլ. *(s)telg(h)-s->ըղձական tēss-¹³). *erg'h-s->*erk's->*erc'-, որը իր գործառնություններ համարժեք է ազգակից հին իռլ. ապառնի rega- <*rīg'(h)-a- ձևին: Հնարավոր է, բայց ոչ պարտադիր, որ աճականավոր *erg'h-s- ձևը¹⁴ կամ *erg'h-()k'->*erj-s-(հմմտ. lus- luay) կամ *erg'h-isk'->*erj-c'- նույնպես գեր են իրադացել հետագա վերաիմաստավորման գործում: Համենայն դեպս *erc'-ը, ինչպես երևաց վերը ասածից, ենթարկվել է եղանակային վերաիմաստավորման այնպես, ինչպես *ert'-s--ը, որից ստացվել է ert'am ձևը:

Եվ վերջապես eluzanem ձևը նույնպես կարելի է ենթարկել մեր ձևաբանական կաղապարավորմանը, եթե չքանկանանք ընդունել Զոլտայի¹⁵ և ավելի վաղ առաջարկած մեկնաբանումները և հետևենք Ֆրիսկի¹⁶ կողմից առաջ քաշված, բայց թույլ հիմնավորված վարկածին, որի համաձայն այն պետք է ցեղակից լիներ հուն. ἐλευσμαι, ἡλευσεν, ἐ(ι)λευσθω բառերի հետ: Այդ պարագայում մենք կստանալինք *eloudh->*eloud+s->*eloudz-'=*elouj-'> eluz- ձևը:

¹² E. Hamp.— Folia Linguistica Historica 3, 1982, 133—4.

¹³ Այդ քերականական կարգի մասին տե՛ս K. H. Schmidt.— Studia Celtica I, 1966, 19—26.

¹⁴ A. Meillet. Introduction a l'étude comparative des langues indo-européennes. Paris, 1903, 178.

¹⁵ D. R. Solta. Die Stellung..., 244.

¹⁶ H. Frisk. Griechisches etymologisches Wörterbuch. 1—3, Heidelberg, 1960—1972, I, 493.

О НЕКОТОРЫХ АФФРИКАТАХ В ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Эрик ХЭМП (Чикаго)

(Резюме)

В настоящей статье Э. Хэмп прослеживается развитие некоторых аффрикат древнеармянского языка и его значение в этимологизации слов, происхождение которых до сих пор остается спорным. К числу таких слов относится *art-ou* *արու*. По мнению Хэмп, связывающего его, вслед за Покоярным и Ачаряном, с санскр. *aṛah*, греч. *ἄρας*, лат. *ager*, неясным оставалось происхождение *t*. Возводя это «загадочное» *t* к и.е. сочетанию **g't*, автор считает, что *g'* развилось в аффрикату **dz/ts*, которая затем, в сочетании с последующим *g*, упростилась, утратив свою фрикативную часть, после чего сочетание *Gr* подверглось метатезе, превратившись в *rt*. Второе слово *tal* *տալ*, связь которого с греческим *γᾱλως*, лат. *glōs*, *glōris*, с.-хорв. *zaova* не вызывает сомнения, заменяет собой **cal* не по аналогии с *taugr*, как принято было считать, а регулярным путем, с упрощением сочетания **dlo>*lu*, аналогичным развитию *lezu* из **dlŋg'hulj* $\rightarrow$ **dlanju* $\rightarrow$ **lVzu*, предварительно с выравниванием **dlo-/dal(a)->*lu-/tal(a)-*.

Во втором разделе рассматриваются слова *anicanem*, *anec* и *anic* (*անիծանիծ*, *անիծ*). В первом из них предполагается развитие **aneidzŋne->*anecan-*, где соседство с *n* (подобно плавным *g* и *l*) является окружением, в котором происходит нейтрализация **d* и **dz*. В случае с *anic* (*անիծ*) предполагается нулевая огласовка корня с сохранением слоговой структуры слова: **konid knid>*konid, kŋnid*, но после утраты *n* (подобно случаям *klu>lu*) парадигматическая связь нарушается, и *nid/anid* развилось самостоятельно; затем основа *anid* стала смешиваться с глаголом *aneid>aneidz*, откуда и появилась форма *anic*.

В третьем разделе рассматриваются случаи, когда звукокомплекс выступает как аффриката. Подробно обсуждается слово *k'ałc'g* (*քաղցր*). Беря за основу идею Ачаряна о том, что это слово должно восходить к и.е. **suadu*, автор предполагает следующее развитие: редуцированное сложение с *-u-* **swadluku->*k'altusu-*; затем, в результате гаплогонии, выпадение *-u-*, аспирация *t* перед *s*, вследствие чего получается **k'ałt'su*; затем звукокомплекс *t's* трактуется как аффриката *c'*, откуда и получается форма *k'ałc'g*.

Таким образом, в ходе развития языка, особенно на ранних стадиях, можно проследить как разложение аффрикат с утратой их фрикативной части, так и слияние компонентов аффрикат воедино.